

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՈՉԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Կոչականը համեմատաբար հանգամանալից ուսումնասիրության նյութ է դարձել անցյալ դարում¹։ Հայերենում կոչականի մասին եղած կարծիքների, նրա ծնաբանական, շարահյուսական և ռեակն բնութագրի մի յուրօրինակ ամփոփագիր է Խ.Բաղիկյանի «Կոչականը և նրա ուսուցումը» աշխատությունը², որտեղ հեղինակը փորձում է հիմնավորել լեզվական այդ իրողության նախադասության անդամ լինելու հանգամանքը ևս³։ Սպասելի էր, որ հետագայում կոչականին անդրադարձող շարահյուսագետները կամ կմերժեին լեզվաբանի արտահայտած կարծիքը, կամ կառաջնորդվեին նրանով։ Նշված աշխատությունից թե առաջ և թե հետո կոչականի մասին եղած տեսակետը մնացել է նույնը⁴։ Ավելին կոչականը միջանկյալ և ներդրյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների հետ շարունակվում է նախադասության հարակից միավորների շարքը դասվել բնութագրվելով ընդամենը որպես տրոհվող շարահյուսական միավոր⁵։ Ու թեև լեզվաբանները խոսում են նաև կոչականի նախադասության մյուս անդամների հետ ունեցած կապի մասին⁶, սակայն ոչ միայն փորձում են դրա մեջ տեսնել յուրօրինակություն այդ կապն անվանելով *հարակցություն*⁷ և *ընդհանրական շարահարություն*⁸ տերմիններով, և ոչ միայն լիարժեքորեն չեն ապացուցում կոչականի նախադասության անդամ լինելու հանգամանքը, այլև չեն պատասխանում հետևյալ հարցերին՝ կոչականը նախադասության ի՞նչ անդամ է (զլխավոր, թե՞ երկրորդական) և նախադասության մեջ շարահյուսական ի՞նչ գործառույթ ունի։ Վերջերս լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ուսումնական ձեռնարկի հեղինակները կոչականն առանց վարանելու զետեղել են նախադասության անդամների շարքում, այն դիտել տրոհվող անդամ և փորձել դարձյալ⁹ հիմնավորել նրա նախադասության անդամ լինելու հանգամանքը¹⁰ հաշվի առնելով, որ «...երկրորդ դեմքի հետ հանդես եկող կոչականները սերտորեն կապվում են բայերով արտահայտված ստորոգյալների հետ և ընկնում են բայերին հատուկ բերականական կարգերի *եղանակավորման, դեմքի, քվի, ինչպես նաև ժամանակի* ոլորտներում (գուցե *ոլորտնե՞րը* — Գ.Խ.)»¹¹։

Մեր այս ձեռնարկումով նպատակ ունենք լեզվական նոր փաստերով ցույց տալու մերօրյա կոչականի առաջացման հնարավոր ուղին, ծշտելու նրա տեղը շարահյուսական համակարգում, հիմնավորելու նախադասության այլ անդամների հետ կապակցման եղանակը, նախադասության անդամ լինելու իրողությունը հնարավորինս պատասխանելով առ այսօր առկախ մնացած հարցերին։

Շարահյուսական համակարգում իրենց զրաված տեղով, տրոհման առանձնահատկությամբ, արտահայտության պլանով և ազատ շարահասության կոչականներն աղբյուրներ ունեն ոչ միայն միջանկյալ ու ներդրյալ միավորների, այլև անվանական միակազմ նախադասությունների հետ¹²։ Այսուհանդերձ, որոշ հատկանիշներով (ինչերանգ, նախադասության այլ անդամների հետ քերականական կապ և այլն) կոչականներն էապես տարբերվում են նշված շարահյուսական միավորներից։

Ավելի քան ակնհայտ է կոչականների տարբերությունը միջանկյալ բառերից, վերջիններիս արտահայտման միջոց են ծառայում վերաբերականներն ու ծայնարկությունները, որոնք ոչ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր են, մինչդեռ կոչականներն արտահայտվում են գոյականներով ու գոյականաբար գործածված բառերով¹³, որոնք ունեն նյութական իմաստ։ Դմմտ

*«Դե՛յ—հե՛յ» կանչելն, անշո՛ւշտ,
Նույնպես գործ է (ՊՍ, 2, 41)։*

— Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը։

— Մեր

եվ, *ավա՛ղ, ոչ մեր ձեռքերում* (ՊՍ, 2, 48)։

*Թողություն տուր, Տե՛ր, ծանր հավարին,
Սիայն թե թող ևա թողնի հեռանա* (ՊՍ, 2, 14)։

*Քո մահվան ծեսը, անխի՛ղժ, այս ինչքան
Երկա՛ր կատարվեց...* (ՊՍ, 1, 210)։

Ինչ վերաբերում է ուղղականի անորոշ առմամբ արտահայտված ներդրյալ բառին, ապա վերջինս, ի տարբերություն կոչականի, նախադաս գործածություն չի կարող ունենալ և արտաբերվում է մի հնչերանգով, որով ստորոգում չի իրականացվում, ինչպես եղբորս տղան (*Արտակ*) միայն վերջերս է վերադարձել հայրենիք¹⁴։

Լեզվաբանների մի խումբ կոչականը համարել է անվանական միակազմ նախադասություն, սակայն շատ որոշակի է նաև կոչականի տարբերությունը ուղղականի հոլովի¹⁵ անորոշ առմամբ արտահայտված անվանական միակազմ նախադասություններից ու ներդրյալ բառերից։ Դմմտ. ա) «**Փարուն**» անվանական միակազմ նախադասությամբ, բ) «Բակունցի սիրահարված հերոսին այնպես էր թվում, թե տարվա այդ եղանակին (**գարուն**) քարերն էլ էին ծաղկել» ներդրյալ բառով և գ) «... **Փարո՛ւն**, ամեն տեղ նոր կյանք ես վառել» (ՎՏ, 1, 88) կոչականով նախադասությունները, որոնք պարզորոշ վկայում են ընդգծված շարահյուսական միավորների հնչերանգային տարբերության մասին։ Թեպետ կոչականն ու անվանական միակազմ նախադասության գերադաս անդամն արտաբերվում են այնպիսի հնչերանգով, որով տարբերվում են արտասանական շղթայում առկա մյուս միավորներից, սակայն անվանական միակազմ նախադասությունների մեջ հնչերանգը [վերջինս շեշտված չէ, ինչպես կոչականի հնչերանգը և գերադաս անդամին վերագրում է ընդամենը առկայության (կամ

բացակայության) կամ սրան հարակից հատկանիշներ) կատարում է ստորոգումն իրականացնող քերականական ձևի դեր¹⁶։ ինչպես *Չյունապատ լեռներ* (ԵԶ, 12)։ *Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգավոր* (ՎՏ, 1, 49)։ Սինչդե կոչականն արտաբերվում է շեշտված հնչերանգով (*Աշո՛ւն*, քեզ ի՞նչ քնքշությամբ, ի՞նչ խոսքերով երգեն քեզ (ՎՏ, 1, 124)¹⁷, որն էապես տարբերվում է անվանական միակազմ նախադասության գերադաս անդամի հնչերանգից։

Չենց տարբեր հնչերանգներով պայմանավորված էլ անվանական միակազմ նախադասության գերադաս անդամը ձեռք է բերում 3-րդ, իսկ կոչականը 2-րդ դեմքի քերականական հատկանիշ¹⁸։ Ասվածը հիմնավորում են բառային միևնույն կազմով արտահայտված անվանական միակազմ նախադասությամբ ու կոչականով հետևյալ կառույցները «*խեղճ սերունդ*, ինչե՛ր ասես, որ չի եղել *նրա* կյանքում» և «*խեղճ սերունդ*, ինչե՛ր ասես, որ չի եղել *քո* կյանքում», որոնցում միևնույն «*խեղճ սերունդ*» շարահյուսական միավորի հետ առնչվող անդամը մի դեպքում արտահայտվում է 3-րդ դեմքի (*նրա*), մյուս դեպքում 2-րդ դեմքի դերանվան (*քո*) բեք ձևով։

Անվանական միակազմ նախադասության գերադաս անդամն ու կոչականն իրարից տարբերվում են նաև նրանով, որ թեև դրանցում երկու դեպքում էլ ժամանակին կատարվել է ստորոգման քերականական ակտ (նկատի ունենք այն հանգամանքը, որ լեզվաբանների մի մասը գտնում է, որ կոչականը ժամանակին եղել է անվանական միակազմ նախադասություն)¹⁹, սակայն առաջինում այդ ակտն այսօր էլ իր տեսակի մեջ համեմատաբար լիարժեք է, մինչդեռ երկրորդ դեպքում այն կորցրել է իր լիարժեքությունը։ Բանն այն է, որ բերված առաջին միավորի համար հնչերանգով այսօր էլ ապահովվում է, այսպես կոչված, զրո շրջապատ կամ բացարձակ դիրք²⁰, այնինչ երկրորդ դեպքում հնչերանգն այլևս զրո շրջապատ չի ապահովում։ Նշանակում է անվանական միակազմ նախադասությունը կարող է ծառայել որպես հաղորդակցման ինքնուրույն միջոց (միշտ հանդես է գալիս որպես անկախ նախադասություն), մինչդեռ 2-րդ դիմային հատկանիշով օժտված լեզվական միավորը (կոչական) բացառիկ դեպքերում է միայնակ կիրառվում, այն էլ միայն բանավոր խոսքին զուգահեռաբար ուղեկցվող դեմքի միմիկայով, ձեռք(եր)ի շարժմամբ կամ էլ լրացուցիչ հնչերանգով (դրանցով խոսակցին «հաղորդվում է» որևէ գործողության կատարման արգելման, հորդորի, հրահրանքի կամ այլ գաղափար) և չի կարող դիտվել իբրև լիարժեք հաղորդակցման միջոց²¹։ Օրինակ

— *Սերյո՛ժա*, — շնչաց Աննան անլսելի քայլերով մոտենալով նրան։...

— *Մայրի՛կ*, — ասաց նա շարժվելով մոր ձեռքերի տակ, որպեսզի իր մարմնի տարբեր մասերով դիպչի մոր ձեռներին (ԼՏ, 143)։

Այնպես որ, եթե «*խեղճ սերունդ*, ինչե՛ր ասես, որ չի եղել *նրա* կյանքում» կառույցը կազմված է երկու անկախ բաղադրիչ նախադասություններից, ապա «*խեղճ սերունդ*, ինչե՛ր ասես, որ չի եղել *քո* կյանքում» կառույցի ընդգծված շարահյուսական միավորը ընդամենը մի, և այն էլ ստորադաս մասն է կազմում այն ամբողջական նախադասության, որից ինքն, ըստ էության, կախյալ է։ Նրան ինչ—որ բան է հաղորդվում։ Ավելին կախյալ է բերված վերջին կառույցն ամբողջովին²², բացակայում է գերադաս մասը հեղինակի խոսքը (օրինակ *ասացի ես*)։

Օժտված լինելով 2-րդ դեմքի քերականական հատկանիշով²³ կոչականը պարտադիր կերպով կիրառվում է խոսքային որոշակի իրադրության, այն է ուղղակի խոսքի մեջ²⁴, մինչդեռ անվանական միակզմ նախադասություններն ու ներդրյալ բառերը սովորաբար կիրառվում են, այսպես կոչված, անուղղակի խոսքերի մեջ ուղղակի խոսքի մեջ կիրառվելով միայն ըստ անհրաժեշտության:

Անվանական միակզմ նախադասության և կոչականի տարբերություններից մեկն էլ այն է, որ կոչականը կարող է ունենալ կամ ենթադրում է 2-րդ դեմքի անձնական դերանվամբ արտահայտված գերադաս անդամ ձևավորված նույնպես ուղղական հոլովով, մինչդեռ անվանական միակզմ նախադասության մեջ ուղղականով արտահայտվում է հենց միայն ինքը գերադաս անդամը:

Հատկանշական է մի հանգամանք ևս. ուղղականով արտահայտվող անվանական միակզմ նախադասության գերադաս անդամը կարող է ստանալ ոչ միայն *ք* կամ *ն* որոշիչ, այլև *ս* կամ *դ* ստացական հոդ: Օրինակ Սիա **կենդանի**... (ՎԴ, 2, 32): **Հայաստանը**... (ՎԴ, 2, 29): **Երկիրս**... («Իմ երկիրը...») և այլն: Կոչականը նշվածներից կարող է ստանալ միայն *ս* ստացական հոդ, ինչպես **Երկիրս**,... («Իմ երկիր...»)²⁵:

Այժմ փորձենք հիմնավորել կոչականի նախադասության անդամ լինելը:

Սիա կոչականի մասին Մ.Աբեղյանի արտահայտած կարծիքը. «Կոչական անունը, երբ բայն երկրորդ դեմքով է, բացահայտիչ է ենթակայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե ոչ»²⁶: Գիտնականի այս ձևակերպումն ուշագրավ է նրանով, որ մեզ համար ելակետ է ծառայել մեկ այլ ավելի ընդհանուր եզրահանգման զալու համար: Լեզվական փաստերի ըննությունը ցույց է տալիս, որ կոչականը ոչ թե 2-րդ դեմքով արտահայտված **ենթակայի** բացահայտիչն է, այլ 2-րդ դեմքով արտահայտված **դու** (**դուք**) գերադաս անդամի, որը տվյալ դեպքում ենթակա չէ: Անվածի մասին է վկայում այն հանգամանքը, որ կոչականը **դու** կամ **դուք** անդամների զուգադրությամբ կարող է հանդես գալ ոչ միայն 2-րդ, այլև 1-ին և 3-րդ դեմքով ձևավորված նախադասությունների մեջ: Օրինակ

Ո՛վ դու անիրավ, ի՞նչ եմ արել քեզ.... (ՀԹ, 1, 127):

Է՛յ դու, քահել, հպարտ հասակ,

Թռար ոսկի աստղի պես.... (ՍԻ, 1, 218):

— *Ո՛վ հավիտյան անձնապատան ու մոլորված դուք մարդիկ՜՜,*
Հեշտ է թվում փափագելին ու սիրածը միշտ մոտիկ (ՀԹ, 1, 210):

2-րդ դեմքի **դու** կամ **դուք** գերադաս անդամի հետ կիրառվելու փոխարեն կոչականը զրական հայերենի նախորդ շրջաններում կարող էր կրել **դ** դիմորոշ հոդ²⁷: (Նշված հատկանիշով ևս կոչականը տարբերվում էր միջանկյալ ու ներդրյալ միավորներից և անվանական միակզմ նախադասություններից): Օրինակ Իսկ Ատոմայ Առկացւոյ եպրեալ զնա ասէ. «Գնա, զնա, **աստուածորդի՛դ** Պարսից, եթ այր իցես» (ՍԻ, 330): Եթ ոչ ծանիցես զանձն քո, **գեղեցիկդ** ի կանայս, էլ դու զհետ զարշապարացն հոտից և արածեա զուլս քո

ի վրանս հովուաց (Երզ., Ա, 7): Դարծի՛ր, *Սոմնացի՛դ*, դարծի՛ր, դարծի՛ր, և տես-
ցուք մեք ի քեզ (Երզ., Ա, 12):

*Դարծի՛ր, դարծի՛ր, սոմնացի՛դ, ընդ վիմին հովանեալ,
եկ, հարսնուհի՛դ, ի լերանց ընծուց, ի դաշտաց այծեմանց (ԳՆ, 115):*

*Արդ, հայեա ի յանգերծ վտանգիցս շրջադրութիւն,
Միայնդ քաղցր առ ամենեսեան (ԳՆՄ, 102):*

*Բայց և զքեզ յայս հրաւիրեմ,
Արևելեան քաղաքդ Անի (ՆՇ, 52):*

*Յրազդա՛ն, գետա՛կդ իմ հայրենի,
Յրազդա՛ն, ջրի՛կդ իմ անուշիկ,.... (ԴԱ, 50) և այլն²⁰:*

Մեր օրերում *դ* դիմորոշ հողով կոչական կիրառվում է միայն ոճական նկա-
տառումներով. ստեղծվում է պատմական անցյալի կամ այլ տպավորություն,
ինչն ակնհայտ է, օրինակ, Վ.Դավթյանի պատմական թեմաներով զրված «Ո՛ր
տալի ինձ զծուխ ծխանի...», «Ասք սիրո և սրի» պոեմներում և այլուր:

*Քայլեց այդպես հայոց շղթայակապ արքան
Ու երբ հասավ բեմին, որոտացին կանչեր,
Աղաղակներ թռան աջ ու ձախից.
— Գլուխ թեքիր, արմեն...
— Բարբարո՛սդ, թեքիր...(ՎԴ, 2, 28):*

*Եվ Անտոնիոսն ահա հեռվից մարտակառքով սուրաց, եկավ.
Կանգնեց հայոց արքայի դեմ և հոխորտաց ցասումնալից.
— Յանդգնեցի՛ր, ստոր արմեն,
— Յանդգնեցի՛ր, ստոր՛ւկդ նենգ,....(ՎԴ, 2, 28):*

*Ինչ—որ մեկը հանկարծ խուլ շշնջաց.
— Փառանձե՛մդ չքնաղ, մի տանջիր քեզ,.... (ՎԴ, 2, 51)²⁰:*

Ինչպես կոչականի հետ *դու (դուք)* գերադաս անդամը կարող է հանդես
գալ թե 1—ին, թե 2—րդ և թե 3—րդ դեմքով արտահայտված նախադասություն-
ների կազմում, այնպես էլ *դ* դիմորոշ հող տեսականորեն կարող են ստանալ
բոլոր կոչականները անկախ այն բանից տվյալ նախադասության ենթա-
կա—ստորոգյալի հետ նո՞ւյն դեմքն են ներկայացնում, թե՞ տարբեր: Դմնտ.

*Ինչ—որ մեկը հանկարծ խուլ շշնջաց.
— Փառանձե՛մդ չքնաղ, մի՛ տանջիր քեզ,.... (ՎԴ, 2, 51):*

Մեկամաղծոտ լճակդ իմ, քեզ հետ ըլլանք մտերիմ,....»(ՊԴ, 48) և այլն:

Այնպես որ, մեր պատկերացմամբ, կոչականը բերված տիպի նախադասությունների մեջ իրականում եղել է բացահայտիչ և ունեցել է իր գերադաս անդամը, այսինքն կոչական-բացահայտյալը՝ արտահայտված **դու (դուք)** դերանվամբ: Վերջինս մեր օրերում նախադասության մեջ սովորաբար զեղչվում է, սակայն որոշ ոճերում դեռևս կարող է պահպանել իր բառային արտահայտությունը, բայց այնքան է սերտաձել իր բացահայտիչի հետ, որ նրանից արդեն չի տրոհվում, այլ նրա հետ միասին հանդես է գալիս որպես մեկ բաղադրյալ անդամ (**դու անիրավ, դու հասակ, դուք մարդիկ**)³¹ ցույց տալով այն ճանապարհը, որով առաջացել է մերօրյա կոչականը: Օրինակ — Ո՛վ երկնառաք բարի **դու ծեր**,... Պարզև կտամ ինչ որ ուզի ավետաբեր քո լեզուն (ՀԹ, 1, 202)³²:

Անհրաժեշտ է նշել, որ **դու (դուք)** գերադաս անդամների հետ գոյականով արտահայտված կոչականի կիրառությունը հատուկ է գրական հայերենի բոլոր շրջաններին³³: Նկատվում է, սակայն, որ խոսքի ենթատեքստում հասկանալի լինելու պատճառով գրական հայերենի բոլոր շրջաններում էլ հիշյալ գերադաս անդամները բառային արտահայտություն ունեն հազվադեպ: Օրինակ **Աղու՛ն**, դու էիր խանգարիչ (Բուզ, 143): **Կարի՛ք**, տյու քին ես, թե արթուն... (ԱՀԲ, 21): Եւ **դու, Դռովմ** մայր քաղաքաց... (ՆԸ, 46): Այլ **դու, ով Տղմուտ**, տրտում ու արյունոտ... (ՂԱ, 24): Ով **դու բարեկամ** այրած սրտերու, խոսնակ գիշերո, հոգյակ վարդերու (ՂԱ, 24) և այլն: Այդ է պատճառը, որ նախադասության կազմում **դու** կամ **դուք** գերադաս անդամների բացակայության դեպքում նախադասության իմաստը չի խաթարվում³⁴, մինչդեռ կոչականը բացառելու դեպքում նախադասության բովանդակային կողմը էապես տուժում է³⁵, որն ինքնին նշանակում է, թե կոչականը նախադասության լիարժեք անդամ է: Հմմտ.

— Կասեն **Սաքո՛**, մեզ մոտ արի... (ՀԹ, 1, 32) և Կասեն մեզ մոտ արի:

— **Գարո՛ւն**, ամեն տեղ նոր կյանք ես վառել (ՎՏ, 1, 88) և Ամեն տեղ նոր կյանք ես վառել³⁶:

Ինչպես որ ենթադրվում է, **դու**-ով կամ **դուք**-ով կարելի է(ր) դիմել, համապատասխանաբար, անորոշ անձի կամ անձերի: Դիմելու այս ձևը, բնական է, ակտիվորեն կիրառվել է լեզվի զարգացման վաղ շրջաններում³⁷: Այդ դերանունների միայնակ կամ որևէ ձայնարկության հետ կիրառումը եղել է անփոխարինելի այնքան ժամանակ, քանի դեռ բառապաշարում բացակայել են անձնանունները, մասնավորապես հատկանունները: Հետագայում, երբ վերջիններս սկսում են գործի դրվել, **դու** կամ **դուք** գերադաս անդամի և նրա հետ հանդես եկող ձայնարկության գործառնությունը կամաց-կամաց դառնում է ավելորդ: Խոսքի մեջ **դու (դուք)** գերադաս անդամի, այսպես կոչված, ավելորդության և սրա արդյունքում զեղչման պատճառը նրա արտահայտած իմաստի մի կողմից անորոշ-ընդհանրական, մյուս կողմից հասկանալի լինելու հանգամանքն է մինչև օրս: Հետագայում սկսում է ակտիվանալ անձնանուններով ձևավորվող կոչականների միայնակ առանց **դու (դուք)** գերադաս անդամի կիրառությունը: Այդ գործընթացը մեր օրերում արդեն գրեթե ավարտված է, սա-

կայն հարկ է նշել, որ անհրաժեշտության դեպքում **դու** (**դուք**) գերադաս անդամը կարելի է վերականգնել, և այդ դեպքում անձնանիշ գոյականներով ու նրանց դերանուն գերադաս անդամներով ձևավորված կոչականների կիրառումով հետապնդում է միայն խոսքի ռեպրեզենտացիոն նպատակ: Պատահական չէ, որ նմանատիպ կապակցությունների կիրառությունը մեր օրերում սովորական է գերազանցապես գեղարվեստական խոսքում և որոշ ոճերում միայն: Օրինակ

Դո՛ւք՝ նոր աստվածներ նոր ժամանակի,
Սուս՝դուրս չգայիք զեթ դուք, գոնե դուք.... (ՊՍ, 2, 85):

է՛յ,
Դո՛ւք՝²⁸
Ռոկֆելլեր,
Ստիննես,
Մորզան կամ.
Լսո՞ւմ եք(ԵՉ, 42):

Այ **դու** կեղծավոր սիրուն անպիտան,
Ես լավ եմ տեսնում այժմ ամեն բան (ՂԹ, 1, 128):

Հատկանշական է նաև, որ մեր օրերում **դու** (**դուք**) կոչականը միայնակ հազվադեպ է կիրառվում.

— **Դո՛ւ,** — բացականչեց Սամվելը, և նրա տխուր դեմքը փայլեց անսպասելի ուրախությամբ: — Թո՛ւյլ տուր զրկել իմ հրեշտակին ... (Բ, 249):

— Է՛յ, **դո՛ւ,** — դիմեցի ես քիչ հեռու կանգնած տղային, — այստեղ արի: Դմմտ. ռուս. — Эй, ты! — крикнул Савелий в сени²⁹:

— **Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ և դո՛ւ,** տուն եկեք, — մատնացույց արեց պապը թոռներից չորսին:

Քայլերով երկաթյա և անդրդվելի եկեք ուրեմն, ո՛վ **դուք**,
Ներս խուժեք խուռներան այս հին դարպասներից (ԵՉ, 3, 187) և այլն:

Մինչդեռ նախադասության մեջ գոյականով արտահայտված կոչականի միայնակ առանց գերադաս անդամի կիրառությունը շատ սովորական է. այն կիրառվում է հենց անորոշ անձ ցույց տվող **դու**–ի կամ **դուք**–ի ընդհանուր իմաստը որոշակիացնելու, բացահայտելու նպատակով: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ բերված տիպի կառույցների մեջ գոյականով արտահայտված կոչականի առկայությունը պարտադիր է, մինչդեռ 2–րդ դեմքի դերանունով արտահայտված գերադաս անդամինը ոչ: Դմմտ.

— Ո՛վ անպատում, անհաս (**դու**) մեծ³⁰, խաղիսափելով ու անգետ մենք հոսելով անց ենք կենում այս աշխարհից, որպես գետ (ՂԹ, 1, 209):

Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում (ՂԹ, 1, 181):

Ավելին **դու (դուք)** գերադաս անդամի բացակայության պայմաններում այսօր գոյականներով արտահայտված կոչականներն իրենք կարող են հանդես գալ գերադաս անդամի դերով ունենալով բացահայտիչ ստորադաս անդամ: Այս վերջին հանգամանքը նույնպես հուշում է կոչականի նախադասության անդամ լինելու օգտին: Օրինակ

— **Հե՛յ, ո՛ւր ես, *Դավիթ՝ հայոց պահապան*,...** (ՀԹ, 1, 161):

— **Էյ աստղե՛ր, աստղե՛ր՝**

երկնքի՛ աչքեր,... (ՀԹ, 2, 87):

— **Սերյոժա իմ սիրելի մանչու՛կ,**— բացականչեց Աննան շնչափուր և ձեռքերով գրկելով նրա փամփուկ մարմինը (ԼՏ, 143):

Հարց է առաջանում եթե կոչականներն ու նրանց ստորադաս անդամներն ուսումնասիրվում են նախադասության անդամներից զատ, ապա ի՞նչ տրամաբանությամբ են մնացած բոլոր բացահայտյալներն ու բացահայտչի բոլոր մյուս դրսևորումներն ուսումնասիրվում նախադասության բուն անդամների շարքում: չէ՞ որ նրանք ոչնչով չեն տարբերվում կոչականներից ու նրանց ստորադաս անդամներից: Այս կապակցությամբ բերենք մեկ այլ կովան ես. այդ ինչպե՞ս է, որ «— **Հե՛յ, ո՛ւր ես, *Դավիթ՝ հայոց պահապան*,...**» (ՀԹ, 1, 161) տիպի կառույցների **հայոց պահապան**—ը համարում ենք բացահայտիչ, որը նախադասության անդամ է, մինչդեռ գտնում ենք, որ վերջինիս **Դավիթ** գերադաս անդամը նախադասության անդամ չէ: Դա նույնն է, եթե, օրինակ, «**Ահեղի բարափից ես տեսա այդ հրաշքը՝ ձորում ծվարած Հոռոմայրը**» կառույցի **Հոռոմայրը** անդամը դիտենք բացահայտիչ, իսկ նրա ուղիղ խնդիր գերադասը (**հրաշքը**) չդիտենք նախադասության անդամ նախադասության անդամ չհանդիսացողն ինչպե՞ս կարող է նախադասության անդամ լրացում պահանջել:

Կոչականի նախադասության անդամ լինելու մասին է վկայում և այն փաստը, որ այն նախադասության մյուս անդամների նման կարող է զեղչվել, սակայն նախադասության բովանդակության պահում ենթադրվել նաև կոչականը: Կոչականը կարող է զեղչվել այն դեպքում, եթե խոսքային նախորդ հատվածներում այն արդեն հիշատակված է եղել իբրև կոչական կամ նախադասության այլ անդամ: Օրինակ

Ոստիկանը մոտեցավ ինձ.

— **Ցտեսություն, տնից չբացակայես, մինչև նորից գամ** (ՀՄ, 47):

— **Աղջի՛, անաստվա՛ծ, նրստիր վրաճում,**

Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում (ՀԹ, 1, 76):

Կոչականի նախադասության անդամ լինելու մասին են հուշում և այն կառույցները, որոնցում կոչականը կարող է արտահայտված լինել ղերբայական դարձվածով.

— **Հեռվում կանգնա՛ծ(դ),**— կանչեցի ես,— **մոտեցիր կամրջին:**

Կոչականի նախադասության անդամ լինելու իրողությունն է հաստատում նաև հանգամանքը, որ նա, ինչպես նախադասության որոշ անդամներ, կազմությամբ կարող է լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ⁴²։ Օրինակներ նարեկացուց.

....Ո՛վ չարդ ի բարեաց,

Ո՛վ դառնութիւնդ ի բաղցրութեանց (ԳԼՄ, 19)։

Սյլ դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն (ԳԼՄ, 171)։

Մի հանգամանք նա. կոչականի երկրորդական նախադասությամբ լրացում ստանալու հնարավորությունը նա ապացուցում է նրա նախադասության անդամ լինելը։ Օրինակ

— Ո՛վ Դայր, ո՛վ դու Դայր, որ երկնքումն ես,
խնայիր թշուառ մեր անտեր ազգին... (ՄԼ, 25)։

— Դու, որ կանգնած ես հեռվում,— կանչեցի ես,— մոտեցիր կամրջին։

Եթե տվյալ նախադասության կոչականը և ենթական միևնույն անձը կամ անձնավորված առարկան չեն, ապա փոխակերպված տարբերակի մեջ կոչականը կարող է արտահայտվել նաև այլ հոլովածներով, ինչպես *ԼԼո՛ւն*, մենք *քեզնից* գոհ ենք,— ասացի ես // ես ասացի, որ մենք *իրենից՝ ԼԼոնից*, գոհ ենք։ Այնպես որ, փոխակերպվելիս նախադասության կազմում մնալու և նախադասության անդամի շարահյուսական գործառույթ կատարելու հանգամանքը նա վկայում է կոչականի նախադասության անդամ լինելու մասին⁴³։

Կոչականը ցույց է տալիս այն անձը, ում հաղորդվում է մի բան⁴⁴։ Այդ նշանակում է, որ կոչականը նախադասության երկրորդական անդամ է և կատարում է հաղորդման անուղղակի խնդրի գործառույթ, որը մեզանում հանգման անուղղակի խնդրի դրսևորումներից մեկն է։ Ասվածի մասին է վկայում և այն հանգամանքը, որ կոչականները, ինչպես հաղորդման անուղղակի խնդիրները, պահանջվում են ասացական բայերի (*հայտնել*, *ասել*, *պատասխանել*, *հաղորդել*, *հուշել* և այլն) և վերջիններիս նշանակությամբ հանդես եկող այլ բայերի (*ալելուացնել*, *նկատել*, *պնդել*, *լրացնել* և այլն) կողմից։ Օրինակ

Ես այդ ասացի Արտակին։

Ես ասացի Արտակին իմ տուն գնալու մասին։

Ես ասացի. «Արտա՛կ, ես տուն եմ գնում»։

Ես ասացի Արտակին այն մասին, որ (ես) տուն եմ գնում։

Կարծում ենք բերված բոլոր կառույցների մեջ ընդգծված անդամները կատարում են հաղորդման անուղղակի խնդրի շարահյուսական գործառույթ⁴⁵ և արտահայտված են տրական կամ ուղղական հոլովով։ Նկատելի է, որ նախադասության հիշյալ անդամը տրական հոլովով արտահայտվում է, այսպես կոչ-

ված, անուղղակի, իսկ ուղղական հոլովով բացառապես ուղղակի խոսքերի մեջ: Նշենք, որ *հաղորդման անուղղակի խնդիրը նախադասության միակ անդամը չէ, որը նախադասությունը անուղղակիից ուղղակիի փոխակերպելիս ենթարկվում է ձևաբանական փոփոխության. այդպիսիք են նաև, օրինակ, ենթական ու ստորոգյալը:*

Յենց միայն այն համագամանքը, որ կոչականը, նյութական իմաստ արտահայտող և թեքվող բառ լինելով, հանդես է գալիս քերականական միայն մեկ ձևով (համաժամանակյա կտրվածքում այդ ձևը անորոշ առմամբ արտահայտված ուղղականն է, որն արտաբերվում է շեշտված և դադարով), ինքնըստինքյան հուշում է, որ այն նախադասության անդամ է և մյուս անդամների հետ պետք է որ կապակցված լինի կամ համաձայնության, կամ էլ կառավարման եղանակով: Այդպես էլ կա դիտարկումը ցույց է տալիս, որ կոչականը համաձայնական կապի մեջ է 2-րդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված գերադաս անդամի հետ. վերջիններիս հետ համաձայնում է դեմքի, թվի, նաև հոլովի ու առման քերականական կարգերով: Ընդ որում, եթե ուղղական հոլովով արտահայտվող կոչականի եզակի և հոգնակի թվերի իմաստներն արտահայտվում են քերականական միջոցներով, ապա 2-րդ դեմքի իմաստը զուրկ է արտահայտության քերականական միջոցներից. այն դրսևորվում է շեշտված և դադարով արտահայտվող հնչերանգի միջոցով: Նկատենք նաև, որ կոչականի և նրա գերադաս անդամի կապն իրականացնում է լիակատար համաձայնության եղանակով:

Ինչպես նշվեց, կոչականները կարող են կիրառվել այնպիսի նախադասությունների մեջ, որոնք ձևավորված են տարբեր դեմքերի ստորոգյալներով⁴⁶: Թե 1-ին, թե 2-րդ և թե 3-րդ դեմքով արտահայտված նախադասությունների կազմում հանդես եկող կոչականներն օժտված են 2-րդ դեմքի քերականական նշանակությամբ: Սակայն 2-րդ դեմքով ձևավորված նախադասությունների մեջ իրականացնում է կոչականի, նրա հնարավոր ստորադաս անդամի (բացահայտիչ) և ենթակայի համաձայնության եղանակով կապակցում, որի հետևանքով նշված կառույցների մեջ տեղի է ունենում կոչականի և ենթակայի համընկնում-նույնացում: Նկատելի է, որ 2-րդ դեմքով արտահայտված կառույցների *դու* (*դուք*) անդամը մեր օրերում սովորաբար դիտվում է ենթակա անկախ այն բանից այդ անդամը տվյալ նախադասության նախկին կոչական-բացահայտյալն է, թե՛ ենթական⁴⁷:

Այդ մասին են վկայում նաև մի շարք կառույցներ, որոնցում մի դեպքում ենթական է զեղչված, մյուս դեպքում կոչականը: Յմտ.

«Դո՛ւ՝ Գևո՛րգ, շատ հոգնած ես երևում»:

«Գևո՛րգ, դու շատ հոգնած ես երևում»:

է՛յ դո՛ւ՝՝ մահվան անմահ աշխարհ

Գերեզմանի պես տխուր.

Բախտ ես կրոնել մարդուս համար,

Զնդան ամուր, ամրակուռ (ՄԻ, 1, 125):

*Էյ զուլում բախտ, դու առյուծ ես,
 ես եղնիկ եմ ճանկիդ մեջ.
 Ինձ քարեքար հերիք գարնես,
 Աիրտս քամես ճանկիդ մեջ (ԱԻ, 1, 125) և այլն:*

Ասվածի օգտին են խոսում նաև «Անցի՛ր, զընա, ջրի՛կդ հայրենի» (ՂԱ, 51) տիպի կառույցները, որոնց *դ* դիմորոշ հոդը եթե *դու*–ի վերածենք, ապա վերջինս, մնալով կոչականական տարածքում, կկատարի, բնականաբար, ոչ թե ենթակայի, այլ կոչական–բացահայտչալի շարահյուսական գործառույթ: Նկատենք, որ *դ* դիմորոշ հոդի հետ օրգանականորեն կապված *դու*–ն նշված կարգի բնավորություն կարող է համդես բերել նաև շարադասությամբ նախադաս կոչական կապակցությամբ բոլոր դեմքերով կառույցների մեջ: Զմմտ. Անցի՛ր, զընա, ջրի՛կ դու հայրենի *և՛* Ջրի՛կ դու հայրենի, անցի՛ր, զընա և այլն: Զմմտ. նաև կառուցվածքով, ուստի և կետադրությամբ իրարից տարբեր հետևյալ նախադասությունները «*Լռի՛ր, դո՛ւ*», «*Լռի՛ր, դո՛ւ՝ Գևո՛րգ*» և «*Լռի՛ր դու*», «*Լռի՛ր դու, Գևո՛րգ*»:

Այսուհանդերձ, կան կառույցներ, որոնցում միաժամանակ բառային արտահայտություն ունեն թե՛ կոչականը, թե ենթական, ինչպես

*Այ դու փսնքոտ,
 Ոչխարի լակոտ,
 Դու ինչի՞ տեր ես....(ԱԽ, 63):*

*Այ դու կռավան չարալեզու,
 Ո՞նց թե Կրկվին ասել ես դու....(ՅԹ, 1, 273):*

*Կլեոպա՛տրա, թագավորա՛ց դու թագուհի,....
 Կանգնել ես դու առագաստիդ բոցի ներքո....(ՎԴ, 2, 22) և այլն:*

Զմմտ. *Դու* միայն *դու*, սրտիս հոգվույս կես Նըժիկ,

Դու սևի՛ր, *դու*, նըստի՛ր մոտ, լաց անուշիկ (ՂԱ, 89):

Զմմտ. նաև ռուս. — Пойми, *чуждак ты*, что ты неправ.

— *Вы там, на катере, давайте к причалу!*⁴⁹:

Զմմտ. նաև իին ռուս.....*А ты бой и Рюрик и Давида!* ("Слово о полку Игореве"):

Ասվածին հակառակ մեր օրերում սովորական են այնպիսի կառույցները, որոնցում միաժամանակ բառային արտահայտություն չունեն ո՛չ կոչականը, ո՛չ ենթական, ինչպես.

— *Գևո՛րգ, տուն արի՞՞*:

2-րդ դեմքով ձևավորված նախադասությունների մեջ քերականական կապ

է հաստատվում ման ստորոգյալի, կոչականի ու նրա հնարավոր ստորադաս անդամի միջև, և դարձյալ տեղի է ունենում համաձայնության եղանակով կապակցում: Կոչականն ու նրա ստորադաս անդամը համաձայնում են ստորոգյալի առաջադրած դեմքին ու թվին: Օրինակ

Դո՛ւ երկու տա՛ռ,

Դո՛ւ հասարակ մի դերանուն,

Եվ ընդամենն այդ քո երկու հատիկ տառով

Այս բովանդակ աշխարհին ես ինձ տեր անում...(ՊՍ, 1, 271):

Ստորոգյալի հետ դիմաթվային համաձայնական կապի մեջ է կոչականն այնպես, ինչպես ենթական: Եզակի ստորոգյալի հետ հանդես է գալիս եզակի կոչական, հոգնակի ստորոգյալի հետ հոգնակի կոչական, ինչպես.

Ձառթի՛ր, գառթի՛ր, կապո՛ւյտ աղջիկ,— ու նայի՛ր խաչին (ԵՉ, 19):

....**Ղու մեռար, քաղցր մայր, ամեն օր, ամեն օր**

Իմ հոգին քո շշուկը կզգա (ԿՏ, 2, 60):

— **Օ՛, ո՛ր եք, աստղե՛ր, արևնե՛ր,**

Իընում է ազգիս երեկոն.... (ԵՉՆԵ, 138):

Ա՛յ ծովակ, սարի ծովակ,

Ա՛յ Վանա բարի ծովակ,

Իմ յարի արցունքն ես դու,

Իմ կորած յարի ծովակ (ՀՇ, 3, 217):

Հոգնակի ստորոգյալի հետ կարող են հանդես գալ ման բազմակի կոչականներ.

Է՛յ, մընա՛ք բարով, Աստվա՛ծ և արև՛,...(ՊԴ, 53):

— **Արտա՛կ, Արա՛մ, Չնե՛լ ու Մհե՛ր, տո՛ւն եկեք,— կանչեց տատը:**

Կոչականի նախադասության այլ անդամների հետ քերականական կապին, հետևաբար ման նախադասության անդամ համարելու հարցին ի շահ կա մի շատ կարևոր կռվան նս. ենթակայից և ստորոգյալից բացի նախադասության կազմում կան կամ կարող են կիրառվել բառեր, որոնք իմաստով վերաբերում են կոչականներին և, որ ամենակարևորն է, քերականական կապի մեջ են վերջիններիս հետ: Օրինակ

— **Թող, Դիլա՛ն, զնա քեզ համար** (ԱԲ, 40):

— **Կլեռպա՛տրա, և ինչի՛ց է, որ չի վառվում**

Քո պարեզոտը թափանցիկ. (ԿԴ, 2, 22):

Այս կարևոր հանգամանքի մասին ակնարկներ են արել Խ.Բաղիկյանը և Ռ. Իշխանյանը:

Խ. Բաղիկյանը բավարարվում է միայն հետևյալ նշումով. «Որոշ նախադասություններում էլ կոչականը կարող է վերագրվել նաև դերանունով արտահայտված ուղիղ և անուղղակի խնդիրներին՝ համոզես բերելով խնդրառական հարաբերություն, որը, ինչ խոսք, գրանորվում է բայ-ստորոգյալների միջոցով»:

**Մանկություն իմ քնքշագին,
ես քեզ ինչպե՞ս մոռանամ (Սարմեն):**

**Ո՞վ քեզ ծեծեց, Մարո քա՛ն,
Ո՞վ անիծեց, Մարո քա՛ն (ԴԹ):**

**Դեպի ձեզ (ընդգծումը մերն է — Գ.Խ.) եմ գալիս, հայրենի՛
լեռներ (ԴԹ):**

**Ծննդավայր իմ հարազատ, քեզնից (ընդգծումը մերն է — Գ.Խ.)
ինչպես հեռանամ (Յ. Սահյան, 241)»²¹:**

Նկատենք, սակայն, որ հենց հեղինակի բերած օրինակների ընդգծված անդամներից ակնհայտ երևում է, որ կոչականը կարող է վերագրվել ոչ թե բոլոր դերանուններով, այլ միայն 2-րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված լրացումներին: Չեղիմակը նկատի չի առել նաև այն հանգամանքը, որ կոչականը կարող է վերագրվել ոչ միայն ուղիղ և անուղղակի խնդիրներին, այլև պարագա լրացումներին և նույնիսկ գոյականական անդամի լրացում հատկացուցչին: Օրինակ

**Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել:
Ա՛խ, նըվիրական ինձ քո գիրկը բաց
եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել... (ՍԻ, 1, 203):**

Ռ. Իշխանյանը, առանձնացնելով կոչականների երկու տեսակ, գրում է. «Ի վերջո, կոչականի բաժանումը համաձայնող ու չհամաձայնող տեսակների գուցե և փոքր-ինչ պայմանական է, քանի որ կոչականը կարող է նախադասության այս կամ այն անդամի հետ թվային համաձայնության մեջ լինել նաև այն դեպքում, երբ ենթակայի համեմատ տարբեր անձ կամ իր է ցույց տալիս. օրինակ «Այ **տղա**, ո՞ւր է քո գրիչը» նախադասության մեջ ենթական է **գրիչը**, կոչականը **տղա**-ն, որը թվային համաձայնություն ունի և է բայի, և **քո** հատկացուցչի հետ. կոչականը հոգնակի դարձնելու դեպքում այդ երկու անդամները նույնպես հոգնակի են լինում («Ա՛յ **տղաներ**, ո՞ւր են **ձեր** գրիչները», նաև «...ձեր գրիչը»: Կամ «Ա՛յ **մարդ**, քեզ համար եմ ասում» նախադասության մեջ **քեզ**-ն է համաձայնել կոչականի հետ (հմտ. «Ա՛յ մարդիկ, **ձեզ** համար եմ

ասում»։ ենթական է եզակի *Ես-ը*)»⁴²։

Այս ձևակերպումից և բերած օրինակներից դժվար չէ եզրակացնել, որ խոսքն այստեղ ևս վերաբերում է կոչական-բացահայտչի նախադասության այլ անդամների հետ ունեցած թվային համաձայնությանը միայն։ Մինչդեռ բազմաթիվ նախադասությունների քննությունը մեզ բերել է հետևյալ եզրահանգման. լինելով 2-րդ դեմքի իմաստակիր (ինչպես նշեցինք, ուղղական հոլովով կոչականը մեր օրերում արտահայտում է 2-րդ դեմքի քերականական իմաստ, որը դրսևորվում է շեշտված և դադարով հնչերանգի միջոցով) կոչականը նախադասության անմիջականորեն իրեն վերաբերող անդամների հետ գտնվում է շարահյուսական կապի մեջ նրանց հետ կապակցվելով եզակի կամ հոգնակի թվի և 2-րդ դեմքի քերականական կարգերի համաձայնության եղանակով (մասնական համաձայնություն)։ Ասվածը վերաբերում է անխտիր բոլոր թե 1-ին, թե 2-րդ և թե 3-րդ դեմքի ստորոգյալների հետ հանդես եկող կոչականներին։ Օրինակ

*Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ,
Ու չեն խայտար քո ալյակք (ՊԴ, 48)։*

*Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ծորերում,
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ Նաիրյան դալար բարդի (ԴՄ, 1, 98)։*

*Լեռոնե՛ր, ես դարձյալ ծեզնով ներշնչված,
Թնդում է հոգիս աշխույժով լցված,
Ու ջերմ իղծերս, բախտից հալածված,
Զեզ մոտ են թռչում հախտոն երամով (ԴԹ, 1, 61)։*

*Քեզ մոտ են գալիս, հայրենի՞ք իմ հեզ (ԴԹ, 1, 61)։
Վառվող սիրտը քեզնից է միշտ աղբյուր ուզել, Սայաթ-Նովա (ՍԿ, 1, 38)։*

*Չի մեռնի էն ժողովուրդը, որ քեզ նման սիրել գիտե,
Սայաթ-Նովա (ՍԿ, 1, 38)։*

...Իմ անգի՛ն, քեզ որտե՞ղ կգտնեմ (ՎՏ, 2, 60)։

*Սիրելիդ իմ Ռուզան, քեզ որքա՛ն քիչ բան էր պետք բախտավոր
լինելու համար։*

Ինչպես նկատելի է, բերված կառույցներում կոչականին վերաբերող առարկայական կամ պարագայական հարաբերությունների արտահայտման միջոց են դառնում 2-րդ դեմքի անձնական դերանվան թեք հոլովածները կամ նրանց մասնակցությամբ ձևավորված կապական կապակցությունները (ընգծված են)։ Ընդ որում, եզակի թվով կոչականին վերաբերող քերականական հարաբերությունների արտահայտման միջոց են ծառայում *դու* դերանվան եզակի թվի թեք ձևերն ու վերջիններիս մասնակցությամբ ձևավորված կապական կապակցությունները, իսկ հոգնակի թվով կոչականին վերաբերող քերակա-

նական հարաբերությունների արտահայտման միջոց *դու* դերանվան հոգնակի թվի թեք ձևերն ու վերջիններիս մասնակցությամբ ձևավորված կապական կապակցությունները:

Խոսքի մեջ 2-րդ դեմքի դերանվան թեք ձևերի փոխարեն 1-ին դեմքի դերանվան թեք ձևեր են գործածվում այն կառույցներում, որտեղ ա) ասելիքը, խոսակցից կամ խոսակիցներից բացի, հավասարապես վերաբերում է նաև իրեն խոսողին, բ) կոչականն ինքը խոսողն է: Նկատենք, որ այսպիսի դեպքերում գործածվում են միայն *ես* դերանվան հոգնակի թվի թեք ձևերը⁵³:

*Աշխարհագոր քաջեր, մեզ այս բլուրն է վիճակված
իրեն պաշտպանության սահմանագիծ (ԼՁ, 176):*

Ծերանում ենք, Պարույր Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս —

Մեր խոռվկան մատներն արդեն դարձել են հեզ ու լսկան (ՊՍ, 2, 218):

Երբեմն 2-րդ դեմքի քերականական իմաստն արտահայտվում է *դ* ստացական հոդի միջոցով, որի հետ միասին քերականական հարաբերությունների ձևավորմանը կարող են մասնակցել նաև կապերը, ինչպես

*Արքա, հայրենավրեժ կոչիդ ի պատասխան
Հայոց աշխարհն է համախումբ կանգնել (ԼՁ, 178):*

*Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենի
Դեմքիդ ստվեր է ձգել, մա՛յր իմ անուշ ու անզին (ԵՉ, 49):*

Արի նստի՛, Սայաթ-Նովա, խոսկտ ասա լամզ ու բասով (Ս-Ն, 38):

— *Տղաներ, ծայրներդ կտրեցեք,— զայրացավ նա:*

Ծաղկազարդ չթով սքողված

Արտիդ մեջ ու հոգուդ վրա

Տրտունջ կա, բողոք կա պահված,

Գյուլնարա, վշտոտ Գյուլնարա (ԳՍ, 191):

Ի դեպ, նախադասության անդամների հետ կարող է իմաստային-քերականական կապի մեջ լինել նաև անվանական միակազմ նախադասության գերադաս անդամը, սակայն այդ կապը, ի վերջո, երկու տարբեր նախադասությունների միջև եղած քերականական-տրամաբանական հարաբերության արտահայտություն է: Օրինակ

Եկավ նաև Արամը: Նա իմ զարմիկն է:

Արտակ... Նա հիմա մեզնից հեռու է հարյուրավոր կիլոմետրերով:

Այսուհանդերձ կան կոչականներ, որոնք խոսքային տվյալ իրադրության

մեջ նախադասության այլ անդամների հետ քերականական որևէ կապ չունեն։ Այսպես արդյոք նախադասության անդամ է «— **Գևորգ, գնում եմ ծովափ,— ասացի ես**» նախադասության կազմում հանդես եկող կոչականը։ Պատասխանը միաթեքորեն դրական է։ Նախ հեղինակի խոսքի մեջ հարկ եղած դեպքում կարելի է վերականգնել *նրան* հաղորդման խնդիրը, որը թվային համաձայնական կապի մեջ է կոչականի (**Գևորգ**) հետ. դրվել է եզակի թվով։ Երկրորդ այս դեպքում (և ընդհանրապես) մեզ օգնության է գալիս կոչականով նախադասության, այսինքն ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի։ Փոխակերպման արդյունքում պարտադիր կերպով փոփոխության ենթարկվող անդամներից մեկն էլ կոչականն է։ Այն ոչ թե դուրս է մնում նախադասության կազմից համարվելով հաղորդակցման համար ոչ կարևոր, լրացուցիչ տեղեկատվական տարր, այլ մնում է նախադասության կազմում իբրև հաղորդման անուղղակի խնդրի գործառույթ կատարող գերադաս անդամի բացահայտիչ կամ էլ (գերադաս անդամի բացակայության դեպքում) իբրև հաղորդման անուղղակի խնդիր անհրաժեշտության դեպքում ենթարկվելով դիմային փոփոխության, ինչպես

Ես հրամայեցի .«Գևորգ, դու տուն գնա»:

Ես հրամայեցի Գևորգին, որ տուն գնա:

Ես հրամայեցի, որ Գևորգը տուն գնա:*

Բերված և բազմապիսի այլ նախադասություններ մեր օրերում կարող են հանդես գալ նաև թերի կազմով։ Այդ է պատճառը, որ շրջանառության մեջ են նաև փոխակերպման այլ տարբերակներ, որտեղ կոչականը կարող է հանդես գալ մի դեպքում հաղորդման անուղղակի խնդրի, մյուս դեպքում ենթակայի, երրորդ դեպքում երկրորդական նախադասության ենթակայի շարահյուսական գործառույթով¹։ Այդ բանին, անշուշտ, նպաստում է նաև կոչականի շարդասական ազատությունը։

Ասվածն ի մի բերենք մի շարք եզրահանգումներով։

1. Կոչականներն էապես տարբերվում են միջանկյալ ու ներդրյալ միավորներից, ուստի շարահյուսական համակարգում կոչականներին պետք է տեղ տալ նախադասության անդամների, այլ ոչ թե ոչ անդամ կամ հարակից անդամ համարվող շարահյուսական միավորների շարքում։

2. Կոչականները ժամանակին իրենց գերադաս անդամների հետ միասին եղել են անվանական միակազմ կառույցներ, որոնք ձևավորվում էին 2—րդ դեմքի ստորոգումով։ Վերջինս տեղի էր ունենում շեշտված հնչերանգի կիրառումով։ Ստորոգմամբ օժտված այդ կառույցները հետագայում տակավ առ տակավ կորցնում են իրենց անկախությունը վերածվելով նախադասության անդամների. Ընդ որում, այսօր շատ հաճախ կոչականը խոսքի ենթատեքստից ենթադրվելու պատճառով զեղչվում է (այդպես զեղչվում են նաև 1—ին և 2—րդ դեմքի դերանուն—ենթակաները, այլև նախադասության ցանկացած անդամ)։ 2—րդ դեմքի ենթակա—ստորոգյալով ձևավորված նախադասությունների մեջ երբեմն զեղչվում է ոչ թե կոչականը, այլ արտահայտության միևնույն միջոցն ունեցող (**դու** կամ **դուք**) ենթական։ Արդյունքը լինում է այն, որ վերջին դեպքում ենթակայի և կոչականի արտահայտության միջոցների նույնը լինելու հետևանքով,

քնականաբար, տեղի է ունենում դրանցից որևէ մեկի զեղչում, ինչը կոչականի զնալով գործածությունից դուրս մղվելու պատճառով մեր օրերում վերագրվում է նախադասության բովանդակային պլանում արդեն երբեմն նույնիսկ չեն-բաղրվող այդ անդամին կոչականին (կարծում ենք այս մոտեցումը միշտ չէ, որ կարելի է հիմնավորել): **Յետգիետե** դուրս է մղվել նաև **դու** կամ **դուք** կոչականին փոխարինող **դ** դիմորոշ հոդը, որը մեր օրերում միայն ոճական ար-ժեք է ներկայացնում: Յետևանքը լինում է այն, որ **դու** կամ **դուք** կոչականի և նրան փոխարինող **դ** դիմորոշ հոդի ստորադաս անդամն սկսում է ավելի հա-ճախ հանդես է գալ ինքնուրույն կամաց-կամաց զրավելով իր գերադաս ան-դամի դերը, իսկ երբեմն էլ հենց ինքը դառնալով գերադաս անդամ⁶:

3. Մերօրյա կոչականը նախադասության լիարժեք անդամ է և քերականա-կան կապի մեջ է տվյալ նախադասության **ստորոգյալի** և իր հետ **առարկա-յական կամ պարագայական հարաբերության մեջ գտնվող այլ անդամ-ների**, իսկ 2-րդ դեմքի ստորոգմամբ նախադասությունների մեջ նաև **ենթակայի** հետ: Նկատելի է, որ նշված բոլոր դեպքերում կապակցումը տեղի է ունենում մասնական համաձայնության եղանակով:

4. Կոչականը նախադասության երկրորդական անդամ է: այն իրականում կատարում է անուղղակի խնդրի գործառույթ: **Կոչական** անվանելով մենք այդպիսով տվյալ անդամը հանում ենք անուղղակի խնդիրների շարքից, որը տեսականորեն միշտ չէ: Նպատակահարմար է կոչականն ուսումնասիրել նա-խադասության երկրորդական անդամների շարքում դիտելով որպես բայա-կան անդամի խնդիր լրացման դրսևորումներից մեկը վերջինիս անվանման մեջ, այնուամենայնիվ, պահպանելով **կոչական** տերմինը **կոչական անուղղա-կի խնդիր** այդպիսիք դիտելով նախկին թե կոչականները, թե հաղորդման անուղղակի խնդիրները: Շայրահեղ դեպքում դրանք երկուսն էլ պետք է դիտել հանգման անուղղակի խնդրի տարատեսակներից մեկը նշելով, որ դրանք պահանջվում են միայն ասացական բայերի կողմից հանդես գալով ուղղակի կամ անուղղակի խոսքային կառույցների մեջ:

5. Բնագրերում հանդիպող կետադրական ամմիօրինակությունը գալիս է հուշելու, որ կոչականի կետադրման որոշ դեպքեր ունեն վերանայման կարիք: Այս կապակցությամբ գտնում ենք⁷, որ

5. 1. Շեշտ պիտի կրեն մինևույն նախադասության մեջ կիրառված թե կո-չականը և թե նրա բացահայտիչը:

5. 2. Կոչականին լրացնող բացահայտիչը կոչականից պետք է տրոհել բու-թով, իսկ նախադասության այլ անդամներից ստորակետով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՍՔ — Սկսել Բակունց, Սլախական մանուշակ, Երևան, 1969:

2. ՍԻ, 1 — Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 1, Երևան, 1973:

3. ՍԽ — Սքաբեկ խնկողան, Երկեր, Երևան, 1980:

4. Բուզ — Փառատոսի Բուզանդացու Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

5. ԳՁ — «Գրական թերթ», 1988, թիվ 43:

6. ԳՆ — Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանգեր, Երևան, 1981

- 7 զԵԱ — Գրիգոր Նարեկացի, Սատեան ողբերգութեան, Երևան, 1985:
- 8 զԱ — Գեղամ Սարյան, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1982:
- 9 ԵԶ — Եղիշե Չարենց, LXXX, Չատընտիր, Երևան, 1977:
- 10 ԵԶՆ — Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Երևան, 1986:
- 11 ԵԶ, 3 — Եղիշե Չարենց, Երկեր չորս հատորով, հ. 3, Երևան, 1987:
12. ԹԱ — Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տաճն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:
13. ԼՏ — Լև Տոլստոյ, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 8, Երևան, 1950:
- 14 ՅԹ, 1 — Յովհ. Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Երևան, 1969:
- 15 ՅԹ, 2 — Յովհ. Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 2, Երևան, 1969:
- 16 ՅԸ, 3 — Յովհաննես Շիրազ, Երկեր, հ. 3, Երևան, 1984:
17. ՅԱ, 1 — Յամու Սահյան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երևան, 1975:
18. ՅԱ — Յարյա Մարտիրոսյան, Գուշակություններ հայելիներով, Երևան, 2003:
- 19 ՂԱ — Ղևոնդ Ալիշան, Նվագներ, Երևան, 1957:
- 20 ՄԲ — Միխայիլ Բուլգակով, Վարպետը և Մարգարիտան, քատերական վեպ, Երևան, 1985:
- 21 ՄԴԵ — Մարգարիտներ հայ քնարերգության, երեք հատորով, հ. Ա, Երևան, 1971:
22. ՍԽ — Սովսիսի Նորենացույ Պատմութիւն Չայոց, Տփղիս, 1913:
23. ՍՆ — Չայ քանաստեղծներ (Արևելեան քարբազ), Բագու, 1908:
24. ՆԶ — Նաիրի Զարյան, Սրա Գեղեցիկ, Երևան, 1968:
- 25 ՆԸ — Ներսես Շնորհալի, Յաղագս երկնից և զարդուց նորա, Չանելուկներ, Ողբ Եղեսիոյ, Երևան, 1968:
- 26 ՆԶ — Նահապետ Զուլակ, Չարյուր ու մեկ հայրեն, Երևան, 1976:
27. ՊԲԳ — «Պատմա-բանասիրական հանդես»,
- 28 ՊԴ — Պետրոս Ղուրյան, Երկեր, Երևան, 1981:
- 29 ՊԱ, 1 — Պարույր Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 1, Երևան, 1972:
- 30 ՊԱ, 2 — Պարույր Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, 1972:
31. ՍԶ — Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 7-րդ («Պապ թագավոր»), Երևան, 1962:
- 32 ՍԿ, 1 — Սիլվա Կապուտիկյան, Երկեր երեք հատորով, հ. 1, Երևան, 1984:
- 33 ՍՆ — Սայաթ-Նովա, Չայերեն, վրացերեն, աղբերքներեն խաղերի ժողովածու, Երևան, 1963:
34. ՎԴ, 2 — Վահագն Դավթյան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 2, Երևան, 1973:
35. ՎՏ, 1 — Վահան Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 1, Երևան, 1960:
36. ՎՏ, 2 — Վահան Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 2, Երևան, 1961:
37. Բ — Բաֆֆի, Սամվել, Երևան, 1984:

ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տես **4.Գ.Ավագյան**, Շարահյուսություն (օժանդակ ձեռնարկ ուսուցչի համար), Երևան, 1983, էջ 83-85: **Ռ.Ա.Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն Պարզ նախադասություն, Երևան, 1986, էջ 280-283: **Ս.Գ.Գյուլբուրդյան**, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Երևան, 1988, էջ 249-255: **Ս.Գ.Աբրահամյան**, Չայոց լեզու (շարահյուսություն), Չանրակրթական դպրոցի 7-8-րդ դաս դասագիրք, Երևան, 1997, էջ 153-157: **Վ.Ա.Քոսյան**, Կոչակների հետքերը հայերենում (ՊԲԳ, 1974, թիվ 3, էջ 166-170) և ուրիշներ:
- Տես **Խ.Գ.Բաղդիկյան**, Կոչականը և նրա ուսուցումը, Երևան, 1982
- Տես ն. տ., էջ 17-39:
- Ս. Գյուլբուրդյանը կոչականն ուսումնասիրում է իբրև «նախադասության հարակից միավոր» (տես **Ս.Գ.Գյուլբուրդյան**, Նշվ. աշխ., էջ 249): Ռ.Իշխանյանը «Արդի հայերենի ինդուկումը և խոնարհումը» աշխատության մեջ (Երևան, 1971, էջ 42-43) կոչականը համարում է նախադասության անդամ, իսկ հետագայում «նախադասությունը լրացնող անդամ» (տես **Ռ.Ա. Իշխանյան**, Նշվ. աշխ., էջ 280), Վ.Ավագյանը դնում է «նախադասության վերաբերական բառերի» մեջ (տես **Վ.Ա.Ավագյան**, Նշվ. աշխ., էջ 83), Ս.Աբրահամյանը «նախադասության անդամ չհանդիսացող բառերի» շարքում (տես **Ս.Գ.Աբրահամյան**, Նշվ. աշխ., էջ 153) և ուրիշներ:
- Թեև կոչականը նախադասության անդամ է համարում նաև Ռ.Իշխանյանը (տես **Ռ.Ա. Իշխանյան**, Նշվ. աշխ., էջ 280), այսուհանդերձ նա չի պատասխանում մի շարք հարցերի, որոնց արժանություն են մեր կողմից

- «...կոչականը,— գրում է, օրինակ, Ս Սաստրյանը,— նախադասության մյուս անդամներից տարբերվող և քերականական յուրահատուկ կապակցությամբ արտահայտվող **նախադասության լիարժեք անդամ** է (ընդգծումը մերն է — Գ.Խ.)»։ Տես **Ս.Բ. Սաստրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1987, էջ 315։
- Տես ն. տ., էջ 315։
- Տես **Ռ.Ա. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 35
- Տես **Սրտաշեն Պապոյան, Խաչիկ Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, էջ 183–194։
- Բանն այն է, որ ձեռնարկի հեղինակներից Խ. Բաղիկյանն է, որ, ինչպես նշեցինք, 1982–ին լույս տեսած իր աշխատության մեջ համոզեց է գալիս կոչականը նախադասության անդամ դիտելու տեսակետով։
- Տես **Ս. Պապոյան, Խ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 186։
- Սյր աղերսների շուրջ ուշադրավ դիտարկումներ ունեն հատկապես ռուս լեզվաբանները
- Տես **Վ.Դ. Ստաբեյան**, Գայերենի շարահյուսություն, Ի. Բ. Երևան, 1964, էջ 421։
- Ելնելով այն դրույթից, թե «**Եթե որևէ բառի հոլովի քերականական կարգ է վերագրվում, ուրեմն այն պետք է շարահյուսական որևէ անդամի դեր կատարի նախադասության մեջ**» (տես **Ս. Պապոյան, Խ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 184–185), հիշյալ ձեռնարկի հեղինակները նշում են. «...Եթե կոչականին վերագրվում է ուղղական հոլովի քերականական կարգ, ուրեմն այն նախադասության անդամ չլինել չի կարող» (տես նշվ. աշխ., էջ 185)։ Կարծում ենք նմանատիպ մոտեցմամբ նախադասության անդամ պետք է համարել նաև ցանկացած հոլովածնով արտահայտված ներդրյալ բառ
- Գ. Տախուկյանը իրավացիորեն նշում է, որ գրաբարում «...կոչական հոլովի բացակայության մասին կարելի է խոսել միայն որոշ վերապահությամբ նկատի առնելով միայն հատուկ հոլովական վերավորությունից զուրկ լինելը» (տես **Գ.Բ. Տախուկյան**, Գին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 132), իսկ Վ. Ստաբեյանը գտնում է. «Սկզբում կոչականն ունեցել է յուրահատուկ հոլովածն, բայց հետո կորցնելով իր ձևական հատկանիշը նույնացել է ուղղական հոլովի հետ» (տես **Վ.Դ. Ստաբեյան**, նշվ. աշխ., էջ 421)։ Սվեյացները, որ, այսուհանդերձ, գրաբարում կային կոչականի արտահայտության առանձին ձևեր [օրինակ ...ի բարձրաց աղաղակեցին. «Ձի» զվարյ կոխես զաստուծոյ գտուն տեսանը, Սղեքանդը է ընդ կրուկն դարձին, թշուառական...» (ՅԱ, 62)]։ որը մեզանում, ինչպես նշում է Գ. Ամադյանը, զործածական է հունձան հոլովման մեջ (տես **Գ. Ամադյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Խ. 3, Երևան, 1957, էջ 423)։ Նույն բանը նկատելի է նաև հին ռուսերենում, ինչպես *Господи, Исусе Христе, сыне божий, помогай мне* ("Житие протопола Авакума"), Спасис" и ты брате и враже Столпче ("Сказание о Борисе и Глебе"), Донець рече княже Игорю! А ты боюи Раруче и Давида! О Днепре Словоутицо! О ватре, ватрило ("Слово о полку Игореве")։
- Տես **Ս.Վ. Գյուրյուդադյան**, Սիակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, էջ 17։
- Կարծում ենք, որ վաղընական կոչական հոլովն իր ուրույն ձևով միաժամանակ արտահայտում էր նաև 2–րդ դեմքի քերականական իմաստ հենց դրանով էլ տարբերվելով ուղղական հոլովից։ Դարկ է նկատել նաև, որ շեշտված հնչերանգով 2–րդ դիմային հարաբերություն արտահայտելու հատկությունը հայերենին հատուկ է ոչ միայն խոսակից անվանող առարկայի, այլև բայական անդամ միակազմ նախադասությունների անդրոշ դերբայով արտահայտված գերադաս անդամի առումով։ Սյր նախադասությունների մեջ անդրոշ դերբայի շեշտումով գերազանցապես արտահայտում ենք 2–րդ դեմքի քերականական իմաստ տվյալ գործողությունը վերագրելով եզակի կամ հոգնակի անձանց [ավելի հանգամանալից տես հեղինակիս «Դիմային հարաբերության արտահայտությունը բայական անդամ նախադասությունների մեջ» հոդվածը (ՊԲԳ, 1990, քիվ 4, էջ 143–153)]։ Գնմտ.
- Շողովի նախագահ Կարդյան Կարոպպետյանը, ինձ դիմելով ասաց
- **Շնկեր Սկազան**, դաի[ի]նը թողնել (Գ–Ջ)։
- **Հարձակվել, անմիջապես հարձակվել**. — ասաց նա մտղը կանգնած ալագ և կրտսեր իրամանատարներից (ՍԶ, 139)։
- Սյս փաստը ևս խոսում է կոչականի ժամանակին անկախ միակազմ նախադասություն լինելու օգտին.
- Կոչականի 2–րդ դիմային հատկանիշով օժտված լինելու մասին տես, օրինակ, **Խ.Գ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 24
- Սյս մասին վկայում են և իայ, և ռուս լեզվաբաններ (տես **Խ.Գ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 19,

24. 38): Ի դեպ, պատահական չէ, որ դեռևս անցյալ դարասկզբին կոչականը տրոհվում էր ոչ միայն ստորակետով, այլև միջակետով և նույնիսկ վերջակետով:
- ²⁵ Տես *Арутюнова Н.Д., Вариации на тему предложения*, М., 1969, стр. 39:
- ²⁶ Ի դեպ, այս դեպքում նա անհնայտ է կոչականի ժամանակին անվանական միակազմ նախադասություն լինելու փաստը:
- ²⁷ Ուղղակի խոսքի նմանատիպ կիրառության հիմնական ուղուղ չափածո խոսքն է, ինչպես — ես այն ու դու լոյս. *հոգի*՝ առանց լոյս աչքն խաւարի (ՆՁ, 15) ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր ... (ՎՏ, 1, 252) և այլն:
- ²⁸ Մենք համարձու չենք ԱՊապոյանի ու ԽՊաղիկյանի հետևյալ ձևակերպմանը «Երբեմն էլ կոչականին վերագրվում է առաջին դեմքի հատկանիշ» (տես Ա.Պապոյան, Խ.Քաղիկյան, նշվ. աշխ., էջ 187): Կոչականը 2-րդ դեմքով է արտահայտվում բոլոր դեպքերում:
- ²⁹ Տես Խ.Ք.Քաղիկյան, նշվ. աշխ., էջ 39
- ³⁰ Տես Գ. տ., էջ 32:
- ³¹ Տես Ա.Արթուրյան, Դայոյ լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 410:
- ³² Բնագրում տրոհված է միջակետով:
- ³³ Թեև Ա.Պապոյանն ու Խ.Քաղիկյանը նշում են, որ կոչականները «ս և դ հոգեր կարող են ստանալ» (տես Ա.Պապոյան, Խ.Քաղիկյան, նշվ. աշխ., էջ 188), այնուամենայնիվ այս ձևակերպումից պարզ չէ խոսքը որ ս և դ հոգերի մասին է. չէ՛ որ կոչականների հետ հանդես եկող ս հոգը ստացական է, իսկ դ հոգը դիմորոշ: Ի դեպ, այստեղ նշվում է նաև բոլոր կոչականների «ուղղական հոլովով և առանց որոշիչ հոգերի» արտահայտության մասին, թեև էջ 186-ում, թերևս թյուրիմացաբար, նշվում է, որ կոչականը «...դրվում է ուղղական հոլովով և որոշիչ հոգ է ընդունում»:
- ³⁴ Միջին գրական հայերենի շաղախյուսական համակարգի ուսումնասիրությանը նվիրված բաժնում խոսք չկա ոչ *դու* (*դուք*) գերադաս անդամի և ոչ էլ նրան փոխարինող *դ* դիմորոշ հոգի մասին (տես Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Խ. Ք, Երևան, 1975, էջ 187-189):
- ³⁵ Հետաքրքիր է, որ խոսքը ոճավորելու նպատակով *դ* դիմորոշ հոգով կոչական կիրառվում է նաև թարգմանական գրականության մեջ այն դեպքում, երբ այդ գաղափարը բնագրում որևէ կերպ արտահայտված չէ. — *Միջերիդ* իմ. — ասաց Ամենա (ԼՏ, 147): Դմնտ. — Милый мой! — скажешь она (Իրականում պետք է լիներ — Милый ты мой!...):
- ³⁶ Այսպես մեկ բաղադրյալ անդամին մեկ վերածվել նաև նախկինում բացահայտվող-բացահայտյալ թագմաթիվ կապակցություններ, ինչպես *ես ինքս* եմ ահա ինձ նշանակում Լուսավորության նախարար՝ ր ասեն, Թե՛ կատարածու նախարարության (ՊԱ, 2, 16): *Ինքը ԼԼոնն* էր այդ մասին պատմել և այլն:
- ³⁷ Որպես կանոն *դու* կամ *դուք* գերադաս անդամը կամ էլ *դ* դիմորոշ հոգը կոչականի հետ հանդես են գալիս հատկապես այն կառույցներում, որոնք մեջ կիրառված է *ով, էլ, այ* կամ էլ նմանատիպ այլ ժայնարկություն, որոնք, մեր լեզվի զարգացման նախորդ շրջաններից սկսած, կիրառվում են որպես կոչականի արտահայտման օժանդակ միջոց, ինչպես
- Ո՞հ, դուք երջանիկ, ո՞հ անհոգ օրեր*
Ընդունակ միայն ուրախացնելու (ԱՆ, 23):
- ³⁸ Բերքը մեկական օրինակ գրաբարից և միջին հայերենից *Այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո* (Պուկ., Ե, 20): Լիսին. *այդ* պանցրիկ *չիսին*. Որ կախկորես մեջ տանխրնգին (ԱՅՁ, 21):
- ³⁹ Ի դեպ, միևնույն բանը կարելի է ասել նաև 1-ին և 2-րդ դեմքի դերանուններով արտահայտվող ենթակաների մասին, որոնք նա նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով ավելի հաճախ գերշխում են, և դրանից նախադասության իմաստը չի տուժում: Նկատենք, սակայն, որ միջանկյալ և ներդրյալ միավորների տեղեկատվությունը նա այնքան հավելյալ չէ, որ առանց այդ միավորների նախադասության բովանդակային կողմը զոհն դուռն-ինջ չտուժի: Դմնտ. «Այդ աղբկա անունը (*Գարուն*) նրան զարմսնք պատճառեց» և «Այդ աղբկա անունը նրան զարմանք պատճառեց» (նախադասություններ: Լեզվաբանական աշխարհում այս հարցը նա մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի: Ս.Ասատրյանն, օրինակ, պարագաների շարքում առանձնացնում է *եղանակի պարագա* անդամը արտահայտված «եղանակավորող բաների (վերաբերականներ — Գ և ի) միջոցով» (տես Ա.Ֆ.Ասատրյան, նշվ. աշխ., էջ 268), Ա Արքաիսայանը (տես Ա.Գ.Արքաիսայան, Զրբեվող խոսքի մասերը..., Երևան, 1955, էջ 503-504) վերաբերականները նախադասության անդամ չի դիտում:
- ⁴⁰ Տես Խ.Ք.Քաղիկյան, նշվ. աշխ., էջ 13-15:

- Սիանգամայն իրավագիտորեն է նկատվել նաև, որ «... կոչականը, որպես կանոն, նախադասությունից դուրս... չի գործածվում» (տե՛ս Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, Խ.Բ. Երևան, 1975, էջ 187):
- Կարծում ենք, որ **դուք**-ից կամ **դուք**-ից ավելի առաջ նմանատիպ դեր են կատարել որոշ կոչական ծայնարկություններ, որոնք արտահայտում էին 2-րդ դիմային նշանակություն, և որոնցով կարելի էր դիմել խոսակցին կամ խոսակիցներին: Օրինակ Ինքն իսկ Սանուշ արդարակեր զկնի որդուց իւրոց և ասէր «**Այ, մի՛ լինիք տիրասպանուք**» (Բուզ., 204) կառույցի ընդգծված հատվածն ունի հետևյալ բովանդակությունը «Պուք, մի լինիք տիրասպանուք» (ի դեպ, հարկ եղած դեպքում այս ձևով դիմում են նաև մեր օրերում):
- Բնագրում քուֆի փոխարեն տրոհված է ստորակետով:
- Տե՛ս *Русская грамматика*, т. 2, М., 1980, стр.164:
- Փակագծեր և ստորակետը մերն են, բնագրում միջակետի փոխարեն տրոհված է բուրով:
- Ի դեպ, լեզվական այս իրողությունը նկատվում է դեռևս զրաբարում: Օրինակ Աղադակեր առ նա այր մի յայգւոյն և ասէր «Օրհնեա, տէր եպիսկոպոս, **գմեզ** և զայգիսս»։ Ստ Զոհան «Փուշ և տատասկ բուցից»։ Ստ այրն «**Ի մարմինդ քո բուցի փուշ և տատասկ**» (Բուզ., 227):
- Թե՛ս նախադասության անդամ չհանդիսացող միավորներն էլ կարող են լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ:
- Խոսքն, անշուշտ, չի վերաբերում *սիրելիս, տեր իմ* և նմանատիպ կոչականներին:
- Դժմու Ս.Ասատրյանի հետևյալ ձևակերպումը «...կոչականը ցույց է տալիս այն անունը, որին ուղղված է խոսքը» (*Մ.Բ. Մատթոյան*, Եզվ. աշխ., էջ 314–315), որից հետո, սակայն, հեղինակը չի նշում, թե կոչականն, այնուամենայնիվ, շարահյուսական ինչ դերով է հանդես գալիս: Դժմու. նաև Ուշխանյանի հաղորդման անուղղակի խնդրի սահմանումը. «Ցույց է տալիս այն անձը, որին մի բան է հաղորդվում, ասվում» (տե՛ս *Ռ.Ա. Իշխանյան*, Եզվ. աշխ., էջ 206), որը նույն կոչականի սահմանումն է:
- Ընդգծված անդամների տեղումնի հարցը կկարգավորվի ժամանակի ընթացքում: Դակված ենք այն մտքին, որ դրանք պետք է անվանել կամ կոչական անուղղակի խնդիր, կամ հաղորդման անուղղակի խնդիր: Նկատի առնելով, որ այն իր բնույթով եպես տարբերվում է հանգման անուղղակի խնդրից:
- Ս.Աբեղյանը կոչականը բնութագրելիս նշում է... «...ունենալով երկրորդ դեմքի նշանակություն ա) ետևից ստանում է երբեմն **դու** դերանունը...» (տե՛ս *Ս.Աբեղյան*, Եզվ. աշխ., էջ 410):
- Դակված ենք կարծելու, որ ցննարկվող կարգի նախադասությունների մեջ 2-րդ դեմքով արտահայտված կոչականը (*դու* կամ **դուք**) և 2-րդ դեմքով արտահայտված ենթական ենթական տարբեր իրողություններ են, և այս հարցում նկատելի է հետևյալ օրինակափոխությունը. եթե որևէ նախադասության մեջ **դու** կամ **դուք** անդամը կոչականով ընդմիջված չէ ստորոգյալից, այն, բնականաբար, ենթակայի դեր է կատարում, իսկ եթե ընդմիջված է, ապա հատկապես որոշ կիրառությունների մեջ դեռևս պահպանում է կոչականի իր դերը. քանի որ արտաբերվում է շեշտված հնչերանգով և որոշակի դադարով, մի հանգամանք, որը բնութագրական չէ ենթակա լինելու պարագայում: Ասվածի մասին լավագույնս վկայում է հետևյալ նախադասությունը Օրինակի համար, **դո՛ւ**, ինչի՞ ես նստել մնացել, **հայրի՛կ** (բնագրում **դու**—ն և **հայրիկ**—ը շեշտված չեն),— անմիջականորեն երկանդ իվանովիչին դիմեց մորեգույն վզով գեր խոհարարը (ՄԲ.189–190):
- Բնագրում տրոհված չէ՝
- Տե՛ս *Русская грамматика*, М., 1980, т. 2, стр. 164–165:
- Նմանատիպ կառույցներ կիրառվում են զրական հայերենի դեռևս նախորդ շրջաններից. Օրինակ **Քեզ** ասեն, **այր քաջ Արտաշես**, ...Եկ հաւանեաց բանից աչազեղոյ դստերս Սկանաց (ՄԽ, 178): Կանչեն, **եար**, արե՛, մի աներ նագիկ (ՄԲ. 17):
- Տե՛ս *Խ.Գ.Բաղդիկյան*, Եզվ. աշխ., էջ 17.
- Տե՛ս *Ռ.Ա.Իշխանյան*, Եզվ. աշխ., էջ 282:
- Խ.Բաղդիկյանը ճիշտ է նկատում գրելով. «Երբեմն էլ կոչականին վերագրվում է առաջին դեմքի հատկանիշ՝ այս դեպքում եզակի թվով գործածված կոչականի հետ ստորոգյալը հանդես է գալիս հոգնակի թվով պատճառն այն է, որ խոսողը իր խոսակցին ներառում է առաջին դեմքի ոլորտի մեջ, և գործողության կատարումը վերագրվում է թե ենթակային և թե կոչականին միաժամանակ» (տե՛ս *Խ.Գ.Բաղդիկյան*, Եզվ. աշխ., էջ 25):
- Ի դեպ, ի տարբերություն կազմությամբ պարզ (բարդ) վյուս կառույցների «**ես հայտնեցի Արտաշեսին իմ՝ տուն գնալը**», տիպի կառույցները, որոնք ձևավորվում են ասացական բայերով, ենթակա են ոչ թե երեք, այլ չորս տեսակ փոխակերպման

ա) պարզից բարդի (ես հայտնեցի Արտակին, որ ես տուն եմ գնում)։

բ) ներգործականից կրավորականի (իմ կողմից հայտնվեց Արտակին իմ տուն գնալը)։

գ) դրականից միտականի (ես չհայտնեցի Արտակին իմ տուն գնալը)։

դ) անուղղակիից ուղղակիի (ես հայտնեցի Արտակին «ես տուն եմ գնում»)։

Չմտն **ես, Գ. Բաղիկյան**, նշվ աշխ., էջ 39

Այդ բանին, անշուշտ, նպաստում է այն հանգամանքը, որ երբեմն (հատկապես այն ժամանակ, երբ դու կամ դուք կոչական զերադաս անդամը խոսքի մեջ չի հիշատակվում), զոյականով արտահայտված կոչական ինքն է ստանում մի նոր բացահայտիչ

եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի

Չորնադազեդ ոգիներ — (ՀԹ, 1, 73)։

— *Երեխաներ Այդ տ. Արամ, ՓԼՈՂ*, տուն եկեք ն ալլն։

Տես **Վ. Սահակյան**, **Վ Սահակյան**, Ուղղագրության, կետադրության և քերականության ուղե-
ցույց, Երևան, 2004, էջ 98

Г. К. Хачатрян

ОБРАЩЕНИЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Первоначально обращения вместе с определяемым словом или без него входили в состав номинативных односоставных конструкции, и формировались предикацией 2-го лица, выражаемой особенной интонацией. Данные конструкции, наделенные предикацией, в дальнейшем потеряли свою самостоятельность и, входя в синтаксические отношения с остальными членами, трансформировались в обычные члены предложения. Причем, поскольку обращения (**ты** или **вы**) предполагались по контексту, они зачастую выпадали.

Такое выпадение (эллипсис) в современном языке носит регулярный характер. Подобному же процессу постепенного выпадения подвергается также притяжательный артикль *դ*, и обращение в функции приложения с течением времени становится самостоятельным членом, занимая место определяемого слова или же становясь им.

В современном языке обращение является полноценным членом предложения, оно согласуется не только со своим исторически определяемым словом, но и предикативной основой и другими членами предложения, которые как-либо связаны с ним.

Языковые факты свидетельствуют о том, что обращение является второстепенным членом предложения, выполняющим синтаксическую функцию косвенного дополнения.

G.K. Khachatryan

ALLOCATION IN MODERN ARMENIAN

Initially allocation were included into nominative constructions and took 2nd person predicates, combined with specific intonation. Later these constructions lost independence and were transformed into common parts of sentence. Besides, as far as the "you, thee" address forms were used in accordance with the context they were often elided. This kind of ellipsis in Modern Armenian has become regular. The definite article "դ" also underwent reduction.

At present address forms in Armenian are full sentence clauses which have preserved the agreement with the defining word and the predicate and other sentence clauses. They perform the syntactic function of secondary sentence clauses.